

ԳՐԱՀԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՒԾԻՈՒՄ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ-
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԶԱՐԹՈՆՔԻ ԱՊԱՑՈՒՅՑ 19-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ
ԿԵՍԻՆ – 20 -ՐԴ ԴԱՐԻ ՍԿՋԲԻՆ*

Վրեժ Հարությունյան

Բանալի բառեր՝ Շուշի, գրահատարակչություն, բարեգործություն, Բաղդասար միտրոպոլիտ, Սմբատ Դադյան, Միրզաջան Մահտեսի Հակոբյան, Հայոց բարեգործական ընկերության Շուշի տեղական վարչություն:

Արցախ աշխարհը և արցախցին հնուց հայտնի են եղել ու աչքի ընկել ոչ միայն հերոսական ոգով, հանուն ազատության պայքարի կորովով, այլև հոգևոր կանքի, գրի ու գրականության հանդեպ տածած միրով, կրթականավորչական և հրատարակչական ակտիվ գործունեությամբ: Այդ ամենի կենտրոնը մինչև խորհրդայնացումը եղել է Շուշին:

Անշուշտ, պետք է միանանակ փաստել, որ Արցախում գրահատարակչության և պարբերական մանուկի գարգացումը պայմանավորված էր Շուշի՝ որ արդյունաբերական, արհեստագործական և առևտուական կենտրոն դառնալով, ընդ որում երկրամասային մասշտաբի: Բնականաբար, տնտեսական ենթակառուցվածքների գարգացումը պետք է հանգեցներ մշակութային գարունքին, ինչն առավել մեծ թափ ստացավ ուսաւական կայսրության կազմում ընդգրկվելուց հետո:

Այս ամենի արդյունքում՝ ժամանակի ընթացքում գրահատարակչությունը դարձավ նաև շուշեցի բարեգործների ուշադրության և հոգածության առարկան: Միաժամանակ, գրահատարակչությունը շուշեցիների համար նաև պատվի, հերիմակության և հայրենասիրության գործ էր, մանավանդ երդ հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ օրինակ Բաքվում առաջին գիրքը հրատարակվեց միայն 1872 թվականին: Այս տեսանկյունից միանգամայն օրինաչափ է Գ. Լևոնյանի այն իրավացի գնահատականը, ըստ որի՝ Թիֆլիսից հետո հայկական տպագործության գործում Անդրկովկասի քաղաքների մեջ ամենանշանակալից դերը խաղացել է հենց Շուշին: [1]

Շուշիում գրատպության հիմքը դրեց 1823 թվականից Արցախում գործունեություն ծավալած Բագելի Ավետարանական քարոզչական ընկերությունը[2] Ավգուստ Դիտրիխի ու Ֆելիչիա Զարեմբայի գլխավորությամբ՝ հիմնելով դպրոց և տպարան:

Ինչ խոսք, հասկանալիորեն, այս ընկերությունն առաջին հերթին և գերազանցապես կրոնա-քարոզչական նպատակներ էր հետապնդում: Այսուհանդերձ, այն նաև որոշակի լուսավորչական և բարեգործական գործունեությամբ նպաստեց Արցախում կրթական գործի զարգացմանը և գրատպության սկզբնավորմանը:

Վերոնշյալի առումով ուշագրավ է Լեոյի գնահատականը. «Շուշու մէջ Բագելի միսիօնէրների գործը ոչ միայն տեղական նշանակութիւն ուներ, այլ եւ ընդհանրապէս հայկական, մասնավորապէս եւ կովկասեան: Լոկ կրօնական նպատակ ունեցող երոպացի բողոքականները տալիս էին հայ մատող սերնդին մի կրթութիւն, որ կրօնական լինելով հանդերձ՝ մերկայացնում էր դաստիարակչական շատ գեղեցիկ նորոյք: Իսկապէս ժողովրդական դաստիարակութեան գործն էր սկսուում Պարաբաղում եւ այս կողմից Շուշու

* Հոդվածն ընդունվել է 12.01.16:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ պատմության ամբիոնը:

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

«լէմսին շկօլը» (գերմանական դպրոցը) նման էր Թիֆլիսի Ներսիսեան դպրոցին, որի հիմնադիրը դրանից առաջ էր զգացել ժողովրդական կրթութեան ահազին խորհուրդը եւ բաց էր արել դպրոցը հասարակութեան բոլոր խաւերի առջև»[3]:

Անշուշտ, հետանկարային առումով կրթականից առավել նշանակալից երևույթ էր Շուշիում 1827 թ. առաջին տպարանի ստեղծումը, որը Արևելյան Հայաստանում երկրորդն էր Էջմիածնից (1771թ.), իսկ ամբողջ Ամրոկվասում երրորդը՝ Թիֆլիսից (1823թ.) հետո[4]:

1837թ. բազեցի միսիոներները Ցարական իշխանությունների և հայ հոգևորական-ների պահանջի արդյունքում, վաճառելով իրենց հաստատությունները՝ հեռացան Շուշից: Ղարաբաղի թեմի նորանշանակ առաջնորդ և թեմի կոնսիստորիայի նախագահ Բաղդասար միտրոպոլիտ Հասան-Զալայյանն իր միջոցներով գնեց նրանց տպարանը և մինչ մահ Շուշիում տպագրական-բարեգործական ասպարեզը գերազանցապես պայմանավորված էր այս անվանի Եկեղեցական-լուսավորչական գործի անվան հետ:

Այս տպարանում 1837-1840թթ. հրատարակվեցին կրոնական, պատմագիտական, փիլիսոփայական, քերականական բովանդակության 11 միավոր գրքեր:

Բաղդասար Հասան-Զալայյանի տպագրած արածին գիրքը համարվում է Ձորջ Բայրոնի «Շիլինյան կալանավորը», որն անվանի բանաստեղծի պոեմի հայերենով առաջին հրատարակությունն է: Այս գրքով կի հրատարակման մասին հիշատակում է Լեռն. «Շուշու կոնսիստորիայի կազմած մի ցուցակից մենք հաճությամբ տեղեկանում ենք, որ Բաղդասար միտրոպոլիտի տպարանի անդրանիկ պտուղը Եկեղեցական գիրք էլ չէր, այլ «Շիլինյան կալանավորը» տպուած 1837 թուականին, դարձեալ միտրոպոլիտի թոյլտութեամբ: Տարաբախտաբար մենք չունեինք այս տպագրութիւնը»[5]:

Բաղդասար միտրոպոլիտի խնդրանքով մովկաբնակ Հովհաննես Հովհաննամը մի ծեռք մանով և հայերեն տաւեր նվիրեց տպարանին: Փաստորեն, գերազանցապես Ղարաբաղի թեմի առաջնորդի հայրենանվեր և բարեգործական (գրքեր նա հիմնականում տպագրում էր իր միջոցների հաշվիմ) ջանքերի շնորհիվ Շուշիում գրատպության գործը դրվեց առավել բարձր տեխնիկական հիմքերի վրա, էապես բարեփոխվեց գրքերի բովանդակային ուղղվածությունը:

Շուշիում 1854թ. կրոնական բովանդակությամբ երկու գիրք հրատարակվեց «Սինաս Տարողիմյանց» տպարանում, որոնցից «Ժամագիր Հայաստանեայց Սուլր Եկեղեցւոյ» գիրքը տպական չուշեցի բարեգործ Մ. Հ. Պապյանցի ծախսերով[6]:

Բաղդասար միտրոպոլիտի մահից հետո նրա տպարանը տնօրինող նոր առաջնորդ Գևորգ Եպիսկոպոս Վեհապետյանը հարուստներից առանձնակի գումար չկարողացավ ստանալ, և տպարանը վերանվանվեց «Տապարան Սրբոյ Էջմիածնի» ու դարձավ Ս. Էջմիածնի Սինոդի սեփականությունը, ինչը պայմանավորված էր նաև դեռևս Բաղդասար միտրոպոլիտի հայրենանվեր առաջնորդի օրոր թեմի ծևավորված անկախությունը հսկելու ծգությունով: Այս տպարանում հրատարակվեցին կրոնական և քերականական ուղղվածության երեք գիրք: Իսկ երբ Ս. Էջմիածնի Սինոդը հրաժարվեց հոգալ և ֆինանսավորել տպարանի գործունեությունը, այն գնեց շուշեցի բարեգործ Հովհաննես Հովհաննամը, ով, սակայն, իր անվանը հրատարակեց ընդամենը մեկ գիրք[7]:

Շուշիում գրահրատարակության գործի բարգավաճումը 1864-1902թթ. սերտորեն պայմանավորված էր «Հայոց հոգևոր տեսչություն» տպարանով[8], որտեղ տպագրվեցին 41 գիրք: Առաջին իսկ հրատարակությամբ նոր տպարանը լուրջ հայտով հանդես եկավ՝ ի դեմք անվանի պատմաբան Կարապետ Եղյանի աշխատության:

40 տպարան ընթացքում հրատարակվեցին կրթական, գրական, կրոնական, քերականական, ուսուցողական, թարգմանական ուղղվածության գրքեր, Կովկասի Հայոց բա-

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

թեգործական ընկերութեան Շուշիի գրադարանի գրացուցակներ[9], բարեգործության մասին[10], հրապարակախոս Կոստանտին Մելիք-Շահնազարյանի (Տնքաչի Խաչան) գրեթեր[11], հայագետ Մանուկ Աբեղյանի առաջնի աշխատությունը[12]:

Առանձնակի հարկ ենք համարում հիշատակել շուշեցի անվանի հայագետ Լեոյի պարագան, ով իր գրական-հրատարակչական գործունեությունն սկսել էր հենց այս տպարանում որպես սրբագրիչ, և իր բազմաթիվ գրեթեր[13] տպագրվեցին այլտեղ, որոնցից մեկի հրատարակությունը հովանավորել էր շուշեցի բարեգործ Մմրատ Դաղյանը: Մի շարք գրքեր տպագրվեցին շուշեցի բարեգործներ Ավետիք Պապյանցի և Հովսեփ Տեր-Մինասյանի հովանավորությամբ:

Շուշիում գրահրատարակության գործը թեմատիկ-բովանդակային որակական ավելի բարձր մակարդակի հասցրեց հայտնի հրատարակիչ-բարեգործ Միրզաջան Մահտեսի Հակոբյանը, ով իր տան կից մասնաշենքում որդիների հետ հիմնեց տպարան[14], որտեղ 1879-1900թթ. հրատարակվեց 50 միավոր գիրք, ինչը էական թիվ էր անգամ ամբողջ Անդրկովկասի հայկական տպագրության համապատկերում, մանավանդ եթե նկատի առնենք այն կարևոր հանգամանքը, որ այդ ընդհանուր քանակում աշխարհիկ ուղղվածության գրականությունը գերակշրում էր: Առաջին իսկ հրատարակություններով տպարանը գիտական և գրական լուրջ հայտ ներկայացրեց Զոն Դրեաբերի պատմագիտական աշխատությամբ և Ալֆոնս Շողեի երկերով:

Մի շարք գրքեր տպագրվեցին շուշեցի բարեգործներ Տիգրան Նազարյանի, Ս. Հայումյանցի, Զ. Սարգսյանի, Ավագ Մահտեսի Հակոբյանցի հովանավորությամբ:

Այս տպարանը 1901-1904թթ. «Եղիսաբեթ Մ. Մահտեսի Հակոբյան» անվանափոխմամբ հրատարակեց չորս գիրք, որոնցից առանձնակի հիշատակության արժանի է Ն. Մելիք-Թանգայանի հիմնարար աշխատության Ա. գրքի տպագրումը[15]:

«Միրզաջան Մահտեսի Հակոբյան» տպարանը այրվեց 1905թ. հայ-թաթարական կրիվների ժամանակ թաթար խաժամումի կողմից:

«Բ. Տեր-Մահակյանց» տպարանը 1901-1917թթ. դերակատարություն է ունեցել Շուշի մշակութային զարթոնքում, և հրատարակել կրոնական, կրթական, գրական, բնագիտական թեմայով 19 միավոր գիրք, որոնցից առանձնակի հիշատակության արժանի է Ն. Մելիք-Թանգայանի հիմնարար աշխատության Բ. գրքի տպագրումը[16]:

«Մելքոն Բաբաջանյան» տպարանը ևս 1910-1919թթ. որոշ դերակատարություն է ունեցել Շուշիի մշակութային զարթոնքում, և հրատարակել է գրական, ազգագրական, կրոնական, տնտեսական[17], քաղաքական բովանդակության 13 միավոր գիրք:

1890 թվականից սկսած գրահրատարակչության ոլորտում սկսում է ակտիվանալ Հայոց բարեգործական ընկերությունը՝ Շուշիի տեղական Վարչության միջոցով որոշելով հրատարակելիք գրքերի թեման և նպատակ հետապնդելով տպագրել ժողովրդական զանգվածների համար նախատեսված օգտակար գրքեր: Ժամանակի մասնուն արժանիորեն գնահատեց շուշեցիների բարեգործական նախաձեռնությունը. «Շուշիի տեղական Վարչութեան ծեռնարկած գործը համակրելի գործ է և խրախուսանքի արժանի, մեր հասարակ ժողովուրդը գուրկ է բոլորովին որևէ մտաւոր սնունդից: Ենց այդ պատճառով ժողովրդական գիրք հրատարակելը մի վերին աստիճանի լուրջ գործ է, որին պէտք է ծեռնարկել որոշ ծրագրով և պատրաստմամբ: Ժողովրդական գիրքը նպատակ պիտի ունենայ հասարակ դասի, ամբոխի մտաւոր հորիզոնը լայնացնել, բարոյական ծգտումներ առաջ բերել նորա մէջ, ներշնչել նորա գիտակցութեան և ինքնուրոյնութեան զգացմունք, տղիտութիւնը և նորա հետևանք զանազան թիւր գաղափարները, սնուտիապաշտութիւնները, որոնք կարելի է ցրել, գիտութեան էական ճշմարտութիւնները պարզ լեզվով ավանդելով նորան, և ի վերջոյ գրգռել սէր, ծգտում դէափի ընթերցանութիւնը»[18]:

Հայոց բարեգործական զնկերության Շուշիի տեղական վարչության ծրագրում առավել ուշադրություն էր դարձվում հենց իրական կյամքի հետ կապված իմքնուրույն և թարգմանական, գիտահանրամատչելի գրքերի հրատարակմանը, սակայն ցարական իշխանությունների ճնշման արդյունքում իրականացավ ծրագրի միայն մի մասը[19]:

Շուշիում գրահրատարակչական գործի գարգացման գործում մեծ ավանդ ունեն Տիգրան Նազարյանը, Համբարձում Առաքելյանը, Լեռն, Սեղրակ Մանդիմյանը, Գրիգոր Տեր-Ղազարյանը, Հովհաննես Տեր-Գրիգորյանը, Առաքել Բահաթրյանը, Սոֆյա Առաքելյանը[20]: 1879թ. Շուշիում անվանի մտավորական Տիգրան Նազարյանը հիմնեց հրատարակչական գրասենյակ բարեգործական նպատակով, չուներ խավերի համար հասանելի գներով գրքերի տպագրությամբ[21]: Նա հրատարակել է Ն. Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակը», թարգմանությամբ լուս ընծայել < Սեմկենիչի «Պոզնանի ուսուցչի օրագրից» պատմվածքը, որը, ի դեպ, լեհ նշանավոր գրողի հայերեն առաջին գրքում էր, Ալ. Դոդեկի նովելները: Ցավոք, հայրենի Շուշիում նրա արգասավոր գործունեությունը կարծ տևեց և նա օրիեկտիվ պատճառներով ճարահատյալ տեղակիոխվեց Թիֆլիս, որտեղ հիմնադրեց «Աղբյուր» և «Տարագ» հանդեսները:

Համբարձում Առաքելյանը 1881թ. Շուշիում հիմնեց Կովկասի հայոց բարեգործական զնկերության առաջին գավառական մասնայուղը մինչև Թիֆլիս տեղափոխվելը նախագահելով: Անդրադառնալով Շուշիում հրատարակչական գործի վիճակին՝ Տիգրան Նազարյանը իրավացիորեն նշել է, որ «Տապագրության արհեստը Շուշիում լավ է դրված: Կյանք կան երկու հարուստ տպարամետր, որոնց մեջ գործում են արագատիալ մեքենաներ: Կովկասում Շուշին Թիֆլիսից հետո առաջին տեղն է բռնում հայերեն գրքերի հրատարակության գործում, և այդ կողմից նա առաջ է անցել այնպիսի մեծ ու հայաց քաղաքից, որպիսին Բաքրուն է» [22]:

Ընդհանուր առմամբ 1850-1920թթ. Շուշիի 9 տպարաններում հրատարակվել է 138 միավոր գիրք՝ ըստ տպարանների հետկալ վիճակագրությամբ. «Մինաս Տարլիհայս» - 2, «Սուլր Էջմիածին» - 3, «Հայոց հոգևոր տեսչություն» - 43, «Հ. Ս. Հովհաննես» - 1, «Միրզաջան Մահտեսի Հակոբյանց» - 50, «Միքայել Հովսեփյանց» - 1, «Եղիսաբեթ Ս. Ս. Հակոբյանց» - 4, «Բ. Տեր-Սահակյանց» - 19, «Մելքոն Բաբաջանյան» - 13:

Այսպիսով՝ Շուշիի համակողմանի սոցիալ-տնտեսական գարգացումը, մշակութային-լուսավորչական գարդունքը և բարեգործության վերելքը պայմանավորեց գրահրատարակչության գարգացումը:

Շուշիում գործի և պարերական մամուլի հրատարակչական գործի պատմագիտական ուսումնասիրությունը հնարավորություն է ընծերում հավուր պատշաճի արժնորելու և ներկայացնելու Անդրկովկասում մշակութային կարևորագույն կենտրոններից մեկը եղած Շուշիի Վճռորոշ դերակատարությունը: Լինելով արդյունաբերական-առևտուրական խոշորագույն կենտրոններից մեկը՝ անտարակույս, Շուշին գրադեցրել է նաև արևելահայության հոգևոր-մշակութային ու հասարակական-քաղաքական առաջատարի դիրք, ինչը մեծապես պայմանավորված էր նաև գրատպության ասպարեզում շուշեցի բարեգործների հայրենանվեր գործունեությամբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լևոնյան Գ., Հայ գիրքը և տպագրության արվեստը: Եր., 1958, էջ 227:
2. Տե՛ս Ղանալանյան Տ., Հայ ավետարանականների գործունեությունը Արցախում, «Գլոբուս», 2012, թ. 2:
3. Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի (1838-1913): Թիֆլիս, 1914, էջ 89-90:
4. Ի դեպ, ուշագրավ է Ուսական կայսրության տարածքում հայկական տպարանների ստեղծման հետևյալ ժամանակագրությունը՝ Պետերբուրգ (1781թ.), Նոր Նախիջևան (1789թ.), Աստրախան (1796թ.), Թիֆլիս (1823թ.), Մոսկվա (1829թ.), Շամալիս (1856թ.), Թեղողոսիա (1859թ.), Բաքու (1872թ.), Գանձակ (1874թ.), Երևան (1876թ.), Ալեքսանդրապոլ (1876թ.), Վիսալյան (1888թ.), Նոր Բայազետ (1890թ.):
5. Լեօ, Պատմութիւն Ղարաբաղի թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, էջ 124:
6. Տե՛ս Ժամագիրը Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ: Շուշի, 1854:
7. Տե՛ս Աւետարան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Շուշի, 1870:
8. Տե՛ս Ավագյան Ս., Նյութեր Ղարաբաղի նախատվետական շրջանի մամուլի պատմությունից, Եր., 1969, էջ 16-19:
9. Տե՛ս Գրացուցակ Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան Շուշու գրադարանի: Շուշի, 1891, 1894:
10. Տե՛ս Բարերարութիւնն այսպէս պետք է եւ Զոն Տէններ: Շուշի, 1886:
11. Տե՛ս Մելիք-Շահնազարեան Կ., Ծխախոտը եւ իր վնասները: Շուշի, 1888; Փշրանք: Շուշի, 1888; Ոգելից ընպելիքների վնասակարութիւնը: Շուշի, 1889:
12. Տե՛ս Աբեղեան Ս., Նմուշներ: Շուշի, 1888:
13. Տե՛ս Լեօ, Վէպ թէ պատմութիւն: Շուշի, 1887; Ծայրեր: Շուշի, 1888; Կոյրի աղջիկը: Շուշի, 1888; Կահան Մամիկոնեան: Շուշի, 1888; Իմ յիշատակարանը: Շուշի, 1890; Սպանուած հայրը: Շուշի, 1891; Թաթախման գիշերը: Շուշի, 1892:
14. Մանրամասն տես Ավագյան Ս. Դ., նշվ. աշխ., էջ 33-37:
15. Տե՛ս Մելիք-Թանգեան Ն., Հայոց Եկեղեցական իրաւունքը: Ա գիրք: Շուշի, 1903:
16. Տե՛ս Մելիք-Թանգեան Ն. Վ., Հայոց Եկեղեցական իրաւունքը: Բ գիրք: Շուշի, 1905:
17. Տե՛ս «Շուշի-Գանձակ ճանապարհի համարօտ հաշիւ: Յովիսի 7-ից 1906 թ. մինչեւ մայիսի 20-ը 1910 թ. Շուշի, 25-ին մայիսի 1910»: Շուշի, 1910:
18. Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1887, օգոստոսի 20:
19. Մանրամասն տես Ավագյան Ս. Դ., Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920թ.), Եր., 1989, էջ 115-132:
20. Մանրամասն տես Ավագյան Ս. Դ., նշվ. աշխ., էջ 103-114:
21. Տե՛ս «Մշակ», Թիֆլիս, 1881, ապրիլի 22:
22. Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1891, թ. 22, էջ 319:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Գրահրատարակչությունը Շուշիում որպես մշակութային-բարեգործական զարթոնքի
ապացույց 19-րդ դարի երկրորդ կեսին – 20 -րդ դարի սկզբին
Վրեժ Հարությունյան

19-րդ դարի երկրորդ կեսին Շուշիում վերելք ապրեց գրահրատարակչությունը և կարճ ժամանակահատվածում Շուշին սկսեց մեծ դերակատարություն ունենալ ամբողջ Անդրկովկասում: Բացվեցին տպարաններ, սկսեցին հրատարակվել բազմաթիվ գրքեր, թերթեր, ամսագրեր: Այդ ամենը տեղի էին ունենում հիմնականում բարերարների և բարեգործական կազմակերպությունների նվիրատվությունների միջոցներով: Շուշիում գրատպությունը նման ձեռքբերումների հասավ Բաղդասար միտրոպոլիսի, Տիգրան Նազարյանի, Սիմեոն Հախումյանցի, Համբարձում Առաքելյանի և ուրիշների ջանքերի ու կատարած բարեգործությունների շնորհիվ:

РЕЗЮМЕ

**Издательство как яркий пример культурно-благотворительного развития в городе
Шуши (второй половины девятнадцатого века - начала двадцатого века).**

Вреж Арутюнян

Ключевые слова: Шуши, издательство, благотворительность, митрополит Багдасар, Смбат Дадъян, Акопян Мирзаджан Магтесович, Шушинское местное управление армянской благотворительной организации.

Во второй половине девятнадцатого века стало развиваться издательство в городе Шуши, благодаря чему город Шуши стал играть большую роль во всем Закавказье. Открыли типографии, стали издавать большое количество книг, выпускать газеты и журналы. Все это осуществлялось в основном при помощи благотворительных организаций и спонсоров. Издательство в городе Шуши достигло своего успеха благодаря таким именам, как митрополит Багдасар, Тигран Назарян, Семен Ахумяնц, Амбарцум Аракелян и другие.

SUMMARY

**Publication of books in Shush like a cultural charity proof in the middle of the XIX century
and in the first part of XX century.**

Vrezh Harutyunyan

Keywords: Shushi's publication of books, Baghdasar metropolitan, Mirzajan Mahtes Hakobyan, Shushi's local council, Armenian charity organization.

In the second part of the XIX century a publication of books in Shoushi was risen up, and in a short period of time it spread all over the Transcaucasia. Typographies were opened and lots of books, newspapers and articles were published. The whole plan was realised due to sponsors and charity organizations. Publishing houses in Shoushi achieved success due to such names as Baghdasar Mitropolit, Tigran Nazaryan, Armen Hakhumyan, Hambardzum Arakelyan.